ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

«29» հունիսի 2022թ. N 453/Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇԵՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 21-ի N 701-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում «Սոցիալական աշխատանք» մասնագիտության մագիստրատուրայի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով միջին որակական գնահատականի անցումային շեմը 15 միավոր:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ՝ Թ. Սավադյանին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ